ՀՀ ԿԳՄՍՆ «ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Օտար լեզուների դասաժամերին սովորողների մեջ ինքնուրույն ստեղծագործական կարողությունների խթանում և զարգացում

Կատարող՝ Ռուզաննա Ռաֆիկի Աբրահամյան

Վերապատրաստող՝ Հակոբյան Ջուլիետա

Դպրոց՝ Ծովագյուղի միջնակարգ դպրոց

ՍԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...……...3

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆ…….....……5

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՇԱԿԵՐՏԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ……...……8

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ……...……11

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ…….....……16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....…..……18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...…...…...20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Այսօր դպրոցի խնդիրը ոչ միայն սովորողների կրթամակարդակը բարձրացնելն է, այլև նրանց գիտելիքները ինքնուրույն լրացնելու և ժամանակակից տեղեկատվության օվկիանոսում կողմնորոշվելու, հետազոտելու կարողություններ ձևավորելը: Հետազոտական մտածողության գործընթացը ենթադրում է ինչպես նորի որոնումը, այնպես էլ արդեն ձեռք բերած գիտելիքների գործածումը: Ցանկացած հետազոտական աշխատանք որոնողական քայլերի շղթա է, որի հաջողությունը պայմանավորված է ուսուցչի աշխատանքի իմաստալից պլանավորումից:

Կրթությունը, ըստ հանրակրթական պետական չափորոշչի, ներառում է սովորողի յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժա-հոգեբանական աշխատանքները, մշակութային, բարոյական, ազգային ու համամարդկային արժեքները: Ժամանակակից մանկավարժության մեջ կրթության առաջնային նպատակ է ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և սովորելու մշակույթ դաստիարակելը:

Աշակերտը պետք է գիտելիքներ ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի ինքնուրույնաբար՝ որոնողական, հետազոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում: Ինքնուրույն գործունեության զարգացմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական-որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը, ինքնագնահատման կարողությունների զարգացումը: Արդի կրթական համակարգում, ընդհանրապես, տարրական դասարաններում մասնավորապես բացառիկ տեղ է հատկացվում սովորողներին՝ ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու կարողությունների ձևավորումը:

Ուստի մերօրյա մանկավարժի գործունեությունը չպետք է սահմանափակի սովորողի ստեղծագործական որոնումների շրջանակը: Ընդհակառակը ուսուցման գործընթացն աշակերտներին պետք է <u>ինքնադրսևորման</u> և <u>ինքնազարգացման</u> հնարավորություն ընձեռնի: Դա իրականացվում է սովորողների կողմից նորը փորձարկելու, բացահայտումների, ուսումնասիրության ընթացքում ինքնուրույն

գործունեություն ծավալելու միջոցով։ Ուսուցիչը, ուղղորդելով, աջակցելով, սատարելով հանդերձ, պետք է աշակերտին՝ աննկատ ու անձայն հուշի. «Փորձի՛ր ինքնուրույն հաղթել արդյունքի հասնելու քո ճանապարհը»։ Մինչդեռ այսօրվա մեր հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա է սովորողների ինքնուրույն գործունեություն ծավալելու կամ իրենց գործունեությունն ինքնուրույն կարգավորելու կարողությունների խնդիրը։

Նշյալով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը։

<u>Հետազոտության նպատակը</u> և <u>խնդիրները</u>: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել գերմաներենի դասաժամերին սովորողների մեջ ինքնուրույն ստեղծագործական կարողությունների խթանումը և զարգացումը։ Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը։

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները*՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն։
- Ներկայացնել աշակերտների ինքնուրույնությունն իբրև անձի ձևավորման խթան։
- Ուսումնասիրել սովորողների ստեղծագործական ունակությունների եվ ինքնուրույնության զարգացման հնարավորությունները գերմաներենի դասավանդման ընթացքում։
- Իրականացնել ազատ դաս գերմաներենի դասավանդման ընթացքում։

<u>Աշխատանքի կառուցվածքը և ծավալը</u>: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, ենթագլուխներից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆ

Տարրական դասարանում ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

Ուսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել,բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ:

Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները զարգանում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:

Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության և հետևաբար, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Սակայն, նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում. Հանրակրթական համակարգից պահանջվում է մշակել ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է

այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում աշակերտի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում[1]: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս,երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Եթե երեխան շատ թե քիչ խելացի է՝ կարող է լավ կատարել հանձնարարություններ, իսկ ահա ստեղծագործաբար աշխատել, խնդիր դնել, ծրագիր ու պլան կազմել և ինքնուրույն իրականացնել դրանք՝ ի վիճակի չէ. Նա չունի ինքն իր հանդեպ այդ վստահությունը: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի հետքրքրություն: Չկա հետքրքրություն՝ չկա կայուն ուսումնական մոտիվացիա, որը հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Ուսումնական աշխատանքները, որ կատարում է սովորողը դպրոցում կամ տանը, պետք է ունենան իրենց մեջ հետազոտական գործունեության տարրեր և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով ավելանա:

Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում ու ակտիվացում:

Ուսումնառությունը հետևողականորեն վերածելով ակտիվ ստեղծագործական աշխատանքի հանրակրթական դպրոցը դրանով իսկ պայմաններ կստեղծի այսպես կոչված ստեղծագործ (կրեատիվ) անձի ձևավորման համար, ինչը բոլոր ժամանակներում (և մեր ժամանակներում՝ առավել ևս) համարվել ու համարվում է

[1] Խաչատրյան Պ., Ինքնուրույնության և ստեղծագործական կարողությունների զարգացումը, Երևան, 1974:

անձի ամենակարևոր որակը: Ստեղծագործական ակտիվության չափանիշներ կարող են համարվել ինտելեկտուալ նախաձեռնության դրսևորումը, օպտիմալ մոտիվացիայի առկայությունը, ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման մակարդակը, ինքնուրույնության դրսևորումը և ուսումնահիմացական գործունեության ինքնակազմակերպման ընդունակությունը:

Մանկավարժները հաճախ առարկում են, թե երեխան հասունացած չէ ինքնուրույնության համար և իրեն նվիրած ազատությունը կարող է չարաշահել՝ մատնվել անգործության: Այստեղ ճշմարտության մի աննշան բաժին կա: Բայց դպրոցի խնդիրն էլ հենց օգնելն է աշակերտին՝ գիտակցել ազատության ու պատասխանատվության դիալեկտիկան: Անառարկելի ճշմարտություն է, որ ազատությունը սովորում են գնահատել ազատ ապրելու պայմաններում, մտածել, պրոբլեմներ հաղթահարել սովորում են դրանք լուծելով, ինքնուրույնության սովորում են նման գործունեություն իրականացնելով, ի վերջո՝ մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով[2]:

[2] Տես նույն տեղում:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՇԱԿԵՐՏԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Անհրաժեշտ է հիշել, որ երեխաների ինքնուրույնությունը չի հերքում մանկավարժի կողմից ղեկավարումն ու վերահսկումը: Ինքնուրույնության ձևավորման մեջ կարևոր է հատկապես այն ժամանակահատվածը, երբ երեխաները նոր են սկսում յուրացնել ամենօրյա փոքրիկ պարտականությունների վերաբերյալ պահանջները՝ ինչպես պետք է վերաբերվել իրերին և առարկաներին, ինչպես շփվել շրջապատողների հետ: Գիտելիքների և ունակությունների ձևավորումն իրականանում է կենսականորեն անհրաժեշտ նմուշների դիտարկման պայմաններում՝ յուրաքանչյուր կոնկրետ փաստի, գործողության հանդեպ հետևողականության ցուցադրմամբ, պահանջի բովանդակության և դրա կատարման եղանակի մանրամասն բացատրությամբ: Այս կամ այն պահանջի ուսուցանումը պետք է իրականացվի կամ անհատական կարգով, կամ երեխաների ոչ մեծ խմբին ցուցադրելու և բացատրելու միջոցով: Ուսուցիչը աշխատանքի վերաբերյալ հուշելուց բացի պետք է այն ՝ ինքնուրույն ընտրելու շահագրգռող ուղղորդիչ հարցեր տա նրանց: Դրա համար հարկավոր է օգնել երեխաներին՝ կոնկրետացնելու աշխատանքները , որպեսզի նրանք ի զորու լինեն և վստահ լինեն, որ կարող են իրենց ուժերով կատարել դրանք: Անհրաժեշտ է նախապես մտածել աճող բարդության խնդիրների համակարգի շուրջ, որոնց լուծումը կառաջացներ ուժերի լարում , կպահանջեր գործադրել անհրաժեշտ կամային ջանքեր ՝ դժվարությունները հաղթահարելու համար: Աստիճանաբար դժվարացող խնդիրների կատարումը ամրացնում է նյարդային համակարգը, բարձրացնում կենասկան ուժը, պահանջում առավոլագույն ակտիվություն և համառություն: Երեխաներին պետք է նախապատրաստել աշխատանքին, տալ խորհուրդ ՝ ինչպես և ինչի համար օգնություն ցուցաբերել, հիշել, թե ինչպես է պետք կատարել առանձին գործողությունները[3]:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե

[3] Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության խնդիրը մանկավարժության մեջ, Երևան, 2009:

վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնության բարձրացման վրա, ապա հարկ է արձանագրել, որ դա մեծապես կախված է վերջինիս մանկավարժական ու անձնային որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ: Կրթության որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը: Կրթության բովանդակությունը

նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին:

Ստացվում է ուսուցչն իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի:

Ստացվում է ուսուցչն իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի[4]:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնության զարգացնող մյուս օղակը հենց սովորողն է՝ կրթական համակարգի առաջնային շահակիցը: Այս պարագայում կարևոր է, որ սովորողն ինքնուրույն գա այն գիտակցմանը, որ այսօրվա ամբարած գիտելիքը, կարողությունն ու հմտությունը իր բարեկեցիկ ապագայի հիմնասյուներն են: Սակայն հատկանշական է, որ այս գիտակցումը հաճախ ժամանակավրեպ է դառնում, քանի որ կոնկրետ ժամանակահատվածում տեղի են ունենում լրջագույն բացթողումներ:

[4] Թորգոմյան Լ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Երևան, 2005:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ինքնուրույն ու նախաձեռնող սովորողի ձևավորումը կրթական համակարգի գլխավոր նպատակներից մեկն է: Սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումն այդ թվում և գերմաներենի դասավանդման ընթացքում նույնպես դիտարկվում է որպես կրթության կարևոր խնդիր: Սովորողների ստեղծագործական ունակությունները կարևոր հանգամանք են հանդիսանում ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու տեսանկյունից:

Հայտնի է, որ օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, է նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը, ուստի և օտար լեզվի դասավանդման ընթացքում կարելի է սովորողի մոտ զարգացնել մի շարք այլ լրացուցիչ կարողություններ, որոնք կարող են ապահովել վերջիններիս բնականոն զարգացումը:

Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը կախված չէ միայն շահառու մեկ կողմից: Միայն սովորողի կամ ուսուցչի ջանքերով հնարավոր չէ բարձրացնել կրթության որակը, ուստի կարելի է ասել, որ այս հիմնախնդիրը պահանջում է համակարգային մոտեցումներ: Այս համատեքստում կարևոր է սովորողի այն գիտակցումը, որ կրթությունը բարեկեցիկ ապագա ունենալու հիմնասյունն է, իսկ օտար լեզուների իմացությունը նոր աշխարհում կողմնորոշվելու ու առաջ գնալու միջոց: Ուստի ուսուցիչն ամեն կերպ պետք է սովորողի համար տեսանելի դարձնի կրթության կարևորությունը, որը միայն բարձր գնահատականի մեջ չէ ամփոփված: Սովորողը պետք է հասկանա կայուն ու առարկայական գիտելիքի, հմտության, կարողության կարևոր նշանակությունը, հասկան, որ այդ գիտելիքն ու կարողությունը կարող է կիրառել ինքնուրույն, առանց որևէ օգնության ունենալ հաղթանակներ: Սեփական համոզմունքների վրա ձևավորված մոտիվացիան ամենակարևորն է կրթական համակարգում:

Ուսումնառության ընթացքում հեգեբանական հարմարմարավետ պայմաններն ու բարենպաստ մթնոլորնտն միաժամանակ և' զարգացնող, և հոգեշտկող նշանակություն ունեն: Նման պայմաններում սովորողների ամբողջ էներգիան ծախսվում է ոչ թե ահնգանգստության, վախի տագնապի, այլ ուսումնական գործունեության, նոր գաղափարների և մտահաղացումների, ստեղծագործական կարողությունների դրսևորումների ուղղությամբ[5]:

Դասավանդման նորագույն մոտեցումների, ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառումը դասավանդման ընթացքում ուսուցչին թույլ են տալիս կառավարելի դարձնել դասարանը, մոտիվացնել ու ոգևորել սովորողներին, գնահատել նրանց կրթական կարիքները: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ , ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին: Սա գիտի յուրաքանչյուր ուսուցիչ: Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն: Ուստի կարևոր ենք համարում ուսումնական հաստատության ուսուցչի դերը կրթության որակի բարձրացման գործում, դրան ուղղված վերջինիս կողմից իրականացրած կառուցողական քայլերը և, որ ամենակարևորն է, փոխհամագործակցությունը սովորողի հետ՝ որպես կրթության առաջնային շահակից:

Այս համատեքստում կարևոր ենք համարում ուսուցչի կողմից սովորողի ցանկացած նորորարական քայլերի խրախուսումը, վերջինիս ինքնուրույն գործելու պահանջմունքի բավարարումը:

Գերմաներենի դասավանդման ժամանակ սովորողը ծանոթանում է այլ մշակույթի առանձնահատկություններն, դրա առանձնահատկությունների: Սա վերջինիս համար անծանոթ միջավայր է, հաճախ կարող է առաջացնել ընկալման դժվարություններ: Սակայն հետաքրքիր ու դինամիկ դասապրոցեսը կարող է

[5] Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթական մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:

հետաքրքրել սովորողին և բարձրացնել նրա հետաքրքրությունները: Գերմաներենի դասավանդման ընթացքում ձևավորվում է նաև սովորողների մշակութային կարողունակությունը: «Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնելու սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ[6]»:

Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև այլ ուսումնական առարկաներից՝ աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը: Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է անձնավորության արժեքային կողմնորոշիչների, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով[7]:

Եթե ուսուցիչը նպատակ է դրել գերմաներենի դասին զարգացնել սովորողների ստեղծագործական ունակությունները, ապա պետք է քաջ գիտակցի, որ ավանդական ուսուցմամբ գործընթացն առաջ տանելն անչափ բարդ է լինելու: Ավանդական ենք անվանում զննական, բացատրական այն մեթոդներին, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին: Կարծում ենք՝ այդ նպատակին հասնելու համար ակտիվ ուսուցման մեթոդը ամենաարդիականն է: Այս մեթոդական համակարգը չի նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի, հմտության, կարողության ձեռքբերում: Ակակտիվ ուսուցման ժամանակ սովորողները

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
[7] Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:

համագործակցում են ուսուցչի հետ, հնարավորություն ունեն ողջ դասապրոցեսի ընթացքում ակտիվ աշխատել:

Դասն ակտիվ ու շարժուն անցկացնելու, սովորողների ճանաչողական ու ստեղծագործական ունակություններն գերմաներենի դասավանդման ընթացքում զարգացնելու նպատակով՝ուսուցիչը կարող է կիրառել մի շարք մեթոդամանկավարժական հնարներ, որոնցից են՝

- ԳՈՒՍ
- Տ-աձև աղյուսակ
- Մ-աձև աղյուսակ
- Շրջագայություն անցած թեմաների էջերով
- Ձնագնդի
- Խճանկար
- Երեք բանալի և մեկ կողպեք
- Մտագրոհ
- Դասի զեկուցող
- Սատանի հնար:

Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը:

Ձևափոխված կամ վերափոխումներով պատմելու տեսակներից է դատողություններով պատմելը: Դատողություններով պատմելիս աշակերտները սովորում են ոչ միայն պատմել փոփոխություններով, այլ նաև վերլուծել գործող անձանց կերպարները, վարքը, կարծիք կազմել նրանց մասին, հիմնավորել նրանց գործունեությունը, այդ մասին դատողություններ ու եզրահանգումներ կատարել: Գերմաներենի դասին շատ կարևոր է նոր նյութի հաղորդումը: Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում

հասկանալ նոր նյութը: Ստեղծագործական ունակությունների զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող հնար է «Կենտրոններով աշխատանքը»:

Գերմաներենի դասաժամին դերային խաղերի կիրառությունը նպատակ ունի նաև աշակերտների մեջ զարգացնել արագ արձագանքելու, մտքերը հաջորդական կառուցելու կարողություն: Խաղային մեթոդների օգնությամբ աշակերտի անհատականության ձևավորումը, տարբեր հմտությունների, կարողությունների և գիտելիքների ձեռքբերումը տեղի է ունենում բնական, առանց ավելորդ ու հորինված բաղադրիչների: Սովորողը խաղային գործունեության ընթացքում անկաշկանդ է, չի լարվում, հնարավորություն է ունենում համագործակցելու դասընկերների հետ: Այս տեխնոլոգիայի օգնությամբ ուսուցիչն ամբողջապես կենտրոնացնում է աշակերտի ուշադրությունը:

Գերմաներենի ուսուցման շրջանակներում, շատ հաճախ կարելի է ստեղծել միջառարկայական կապեր՝ թույլ տալով սովորողին խոսել իր հետաքրքրությունների մասին: Կարելի է ճանապարհորդել, ուսումնասիրել, հաշվել, երգել գերմաներենի օգնությամբ, ինչն էլ ապահովում է համալիր գիտելիքների ստացում: Ստեղծագործական ունակությունների զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող մի հնար է «Գուշակություն» հնարը: Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Ստացվեց, որ դասի մեջ ուսուցիչը մի հետաքրքիր կայծ դրեց՝ նպաստելով, որ դասարանը համակարգված աշխատի: Անդրադառնանք նաև գերմաներենի դասավանդման ընթացքում սովորողների ինքնուրույնության ու նախաձեռնության խթանման հնարավորություններին[8]:

[8] Богоявленская Д. Б., Психология творческих способностей — М., Издательский центр «Академия» 2002.

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Տեսական մասում մեր կատարած պնդումները կհիմնավորենք դասի օրինակով: Դիմել ենք ակտիվ ուսուցման մեթոդական համակարգին՝ ակնկալելով զարգացնել սովորողների ինքնուրույն ստեղծագործական կարողությունների խթանում և զարգացում:

ԱԿՏԻՎ ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿ

Առարկան՝ Գերմաներեն

Թեմա՝ Ածական

Նպատակ՝

1. Վերհիշել և ամրապնդել Ածական թեման
2. Զարգացնել բանավոր խոսքի կարողություններն ու հմտությունները
3. Ձևավորել երեխաների մեջ սեր աշխատանքի, աշխատասիրության նկատմամբ:

Վերջնարդյունք՝ Դասի ավարտին աշակերտները

1. Կկարողանան ինքնուրույն և ճիշտ պատասխանել Ածական թեմային վերբերող հարցաշարին:
2. Կկարողանան զրույց վարել, նախադասություններ կազել օրինակներ Ածական համեմատության ճիշտ աստիճանով:

Մեթոդներ՝ Երկխոսություն,Վեննի դիագրամ

Ուսումնական միջոցներ՝ Դասագիրք, աշխատանքային տետր, գրատախտակ, համակարգիչ

Դասի տիպը՝ Ամփոփիչ դաս

Տնային աշխատանքի ստուգում՝ Աշակերտները կարդում են տնային հանձնարարությունը: Տնային հանձնարարությունում գտած սխալները քննարկվում են:

Հարցեր

1. Առակն ինչ է ուսուցանում

2. Ինչն ենք այստեղ արժևորում և ինչու:

Խթանում՝ Աշակերտներին տրված է 1 բոպե և հանձնարարվում գրի առնել 2 ցուլերից յուրաքանչյուրին նկարագրող 2 բառ: Այսպիսով վեր հանել սովորողների ունեցած գիտելիքները ածական թեմայի վերաբերյալ: Վեննի դիագրամայով ներկայացնել երեխաներին իրենց նմանությունները:

Կշռադատման փուլ՝ Կատարում են դասարանական աշխատանք:

Գնահատում՝ Ձևավորող գնահատմամբ գնահատվում են բոլոր աշակերտները: Բարձր և միջին արդյունք ցուցաբերած աշակերտին գնահատել միավորային գնահատմամբ

Տնային հանձնարարություն՝ Վարժություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն ավարտական աշխատանքը, հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, եթե գերմաներենի դասավանդման ընթացքում ուսուցիչը հիմնական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ նպատակ է դնում զարգացնել սովորողի պատկերավոր մտածողությունը, ինքնուրույն գործելու ու նախաձեռնողական քայլեր կատարելու կարողությունը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ որոշակի կոնկրետ գոտում աշակերտն ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Այս համատեքստում կրկին կցանկանանք շեշտադրել աշակերտակենտրոն ուսուցման կարևորությունը:

Սովորողի հետ հաշվի նստել, լսել նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը սովորողին ու դասարանը կդարձնեն հեշտ կառավարելի, և ուսուցիչն անպատճառ կհասնի հաջողության: Իսկ ահա ստեղծագործական ունակությունների զարգացումն անմիջական գործընթաց է, որը զուգահեռվում է հիմնական գիտելիքների հաղորդմանը, ուստի ուսուցիչը պետք է շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի ամեն կերպ խրախուսվի անհատի գիտակցումը, ինքնուրույնության կարևորությունը սովորողի մոտ: Անշուշտ, այս ամենից հետո կարելի է վստահաբար նշել, որ գործ կունենանք նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն դատող անհատի հետ: Կարևորագույն բաղադրիչ է նաև բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ սովորողը հնարավորինս արագ ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել ուսումնական հաստատությունից դուրս: Այս հարցում պակաս կարևոր չէ սոցիալական միջավայրի՝ այս պարագայում դասարանի ընդհանրական դերը:

Կցանկանայինք վերահաստատել նաև ուսուցչի աշխատանքի ընթացքում վերջինիս ընտրած մեթոդական եղանակների ու առհասարակ դասի տեսակների կարևոր նշանակությունը: Զանազան մեթոդների կիրառությունը, ակտիվ, գործուն դասերի, խմբային ու գործնական աշխատանքների իրականացումը, միջառարկայական կապերի ստեղծումը, միակ արդյունավետ եղանակներն են հաջողության հասնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Պ., Ինքնուրույնության և ստեղծագործական կարողությունների զարգացումը, Երևան, 1974:
2. Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության խնդիրը մանկավարժության մեջ, Երևան, 2009:
3. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթական մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:
4. Թորգոմյան Լ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Երևան, 2005:
5. Գիտամեթոդական հանդես, «Օտար լեզուները Հայաստանում»:
6. Богоявленская Д. Б., Психология творческих способностей — М., Издательский центр «Академия» 2002.